ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐ 1

ՔՐԵԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ

ՆՅՈՒԹԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ա) Կարինե Հասրաթյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«նա 2018թ. նոյեմբերի 15-ին իր դուստր Մարիա Գևորգյանին ամուսնացրել է չափահաս Կարեն Մելքոնյանի հետ և նրանք համատեղ բնակվել են Գեղարքունիքի մարզի Ջոլաքար գյուղում: 2018թ. նոյեմբերի 22-ին ժամը 22-ի սահմաններում Կարինե Հասրաթյանը զանգահարել է Կարեն Մելքոնյանին, սակայն հեռախոսն անջատված լինելու պատճառով չկարողանալով խոսել նրա հետ, վարձավճարով տաքսի ծառայություններ մատուցող Մամիկոն Հայրապետյանի վարած «Մերսեդես E 230» մակնիշի ավտոմեքենայով գնացել է Կարեն Մելքոնյանի տուն, առանց որևէ պատճառի հավաքել դստեր իրերը և նրա հետ միասին վերադարձել Բյուրեղավան քաղաքում գտնվող իրենց տուն՝ Մամիկոն Հայրապետյանին խոստանալով կարճ ժամանակում վճարել մատուցած ծառայությունների դիմաց նրան պարտք մնացած 12.000 դրամ գումարը:*

2018թ. նոյեմբերի 23-ին Կարեն Մելքոնյանի կողմից իրեն զանգահարելու և իր կողմից դրսևորած արարքի վերաբերյալ պարզաբանում պահանջելուց հետո հեռախոսազրույցի ընթացքում Կարինե Հասրաթյանը Կարեն Մելքոնյանից պահանջել է իրեն վերադարձնել իր կողմից վերջինիս մորը նվիրած ոսկյա մատանին՝ սպառնալով, որ հակառակ դեպքում կդիմի ոստիկանություն և կներկայացնի նրա կողմից հանցագործություն կատարելու վերաբերյալ հաղորդում: Չնայած Կարեն Մելքոնյանի կողմից պահանջը կատարելուն՝ 2018թ. նոյեմբերի 24-ին՝ ժամը 15.30-ին, Կ. Հասրաթյանը ներկայացել է ՀՀ ոստիկանության տարածքային բաժանմունք և Կարեն Մելքոնյանին մեղադրել դստեր առևանգման և վերջինիս բռնաբարության մեջ:

Այնուհետև Կարինե Հասրաթյանը իր վերջնական նպատակին հասնելու համար դստերը՝ Մ. Գևորգյանին, ստիպել է վարույթ իրականացնող մարմնին ներկայանալիս հաստատել իր հայտնած տեղեկությունները»:

Բ) Մարիա Գևորգյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«նա 2018թ. նոյեմբերի 15-ին ամուսնացել է Կարեն Մելքոնյանի հետ և նրանք համատեղ բնակվել են Գեղարքունիքի մարիզ Ջոլաքար գյուղում: 2018թ. Նոյեմբերի 22-ին ժամը 22-ի սահմաններում նրա մայր Կարինե Հասրաթյանը զանգահարել է Կարեն Մելքոնյանին, սակայն հեռախոսն անջատված լինելու պատճառով չկարողանալով խոսել նրա հետ, վարձավճարով տաքսի ծառայություններ մատուցող Մամիկոն Հայրապետյանի վարած «Մերսեդես E 230» մակնիշի ավտոմեքենայով գնացել է Կարեն Մելքոնյանի տուն, առանց որևէ պատճառի հավաքել դստեր իրերը և նրանք միասին վերադարձել են Բյուրեղավան քաղաքում գտնվող իրենց տուն: Այնուհետև Կարինե Հասրաթյանի կողմից իր նկատմամբ գործադրված հարկադրանքի արդյունքում 2018թ. դեկտեմբերի 8-ին ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության N քննչական բաժնում որպես տուժող հարցաքննվելիս, Կարեն Մելքոնյանին մեղադրել է իրեն առևանգելու և բռնաբարելու մեջ: Ինչպես նաև իրենց բնակարան այցելած և մոր կատարած արարքների համար պարզաբանում պահանջած Կարեն Մելքոնյանին հարվածել է խոհանոցային դանակով՝ վերջինիս առողջությանը պատճառելով ծանր վնաս»:*

ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Կարինե Հասրաթյան՝ ծնված 10.02.1969թ., միջնակարգ կրթությամբ, ամուսնացած է, ունի մեկ դուստր, խնամքին մեկ անձ (դուստրը), աշխատում է որպես հացթուխ, 2005 թվականի մայիսի 7-ին վերջինիս նկատմամբ կայացվել է արդարացման դատական ակտ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքով, բնութագրվում է բացասական, ՀՀ քրեական օրենգրքի 113-րդ հոդվածով նախատես-

ված հանցավոր արարքը կատարելու համար նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով: ՀՀ քր.օր-ի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքով ճանաչվել է մեղավոր, և Դատարանի՝ 2017 թվականի մայիսի 10-ի դատավճռով դատապարտվել է 3 տարվա ազատազրկման, որը պայմանականորեն չի կիրառվել և վերջինիս նկատմամբ սահմանվել է փորձաշրջան՝ 3 տարի ժամկետով:

Մարիա Գևորգյան՝ ծնված 15.05.2001թ., ամուսնալուծված, չի աշխատում, խնամքին ոչ ոք չկա, նախկինում չդատապարտված, բնութագրվում է դրական:

ԳՈՐԾԻ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

2018 թվականի դեկտեմբերի 1-ին ՀՀ ոստիկանության N բաժնում ՀՀ քրեական օրենգրքի 138-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ X քրեական գործը:

2018 թվականի դեկտեմբերի 4-ին Մարիա Գևորգյանը ճանաչվել է տուժող: Նախաքննության մարմնի 2019 թվականի փետրվարի 15-ի որոշմամբ թիվ X քրեական գործով Կարեն Մելքոնյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով և 138-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդում չի իրականցվել հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

2019 թվականի փետրվարի 15-ին ՀՀ քննչական կոմիտեի N քննչական բաժնում հարուցվել է թիվ Y քրեական գործը:

2019 թվականի մարտի 26-ին Կարինե Հասրաթյանը ձերբակալվել է:

2019 թվականի մարտի 26-ին Մարիա Գևորգյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստարագրությունը:

Նախաքննության մարմնի 2019 թվականի մարտի 29-ի որոշմամբ Մ.Գևորգյանը ներգարվվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Կ.Հասրաթյանը ներգարվվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել: Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2019 թվականի մարտի 29-ի որոշմամբ Կ.Հասրաթյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: 2019 թվականի մայիսի 2-ին Կ.Մելքոնյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել:

2019 թվականի հունիսի 26-ին քրեական գործից Կ.Մելքոնյանի վերաբերյալ մասը անջատվել է, իսկ «մայր» գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

2019 թվականի հունիսի 28-ին կայացվել է որոշում՝ քրեական գործը վարույթ ընդունելու մասին: Մեղադրյալների նկատմամբ կիրառված խափանման միջոցները Դատարանի կողմից թողնվել են անփոփոխ:

ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ

Մեղադրյալ Կարինե Հասրաթյանի ցուցմունքներն այն մասին, որ աղջկան՝ Մարիա Գևորգյանին 2018 թվականիի նոյեմբերի 15-ին կնության է տվել Կարեն Մելքոնյանին: Նույն թվականի նոյեմբերի 22-ի գիշերն աղջիկը զանգահարել է իրեն և խնդրել, որ գնա նրա հետևից և իր հետ տուն բերի: Ինքը զանգահարել է տաքսի ծառայություն: Տաքսի ավտոմքենան եկել է, վարորդի անունը եղել է Մամիկոն, ով իրեն տարել է Զոլաքար: Երբ հասել են այնտեղ, աղջկա ամուսնուն ասել է, որ նա արժանի չէ իր աղջկան, այնուհետև հավաքել է դստեր իրերը և աղջկան տարել է իր տուն: Հաջորդ օրը իրեն է զանգահարել փեսա Կարենը և նրա արարքի համար պարզաբանում պահանջել: Հեռախոսազրույցի ընթացքում իրենք վիճել են, և Կարենը սեռական բնույթի հայհոյանքներ է հնչեցրել իր հասցեին: Դրանից զայրացած, ինքը պահանջել է Կարենից, որ հետ վերադարձնի իր կողմից նրա մորը նվիրված 110.000 ՀՀ դրամ արժողության անդամանդե քարով մատանին, իսկ Կարենը պատասխանել է, որ մայրը այն կրում է և չի պատրաստվում վերադարձնել: Այդ պատասխանից ինքը, ավելի զայ-

րանալով, պահանջել է, որ Կարենը ամեն գնով այդ մատանին վերադարձնի, թեկուզ սպասի հարմար առիթի և առանց մոր գիտության ու առանց նրան տեղյակ պահելու վերցնի այդ մատանին և վերադարձնի իրեն՝ հակառակ դեպքում սպառնալով ոստիկանությունում հաղորդում ներկայացնել, թե իբր նա առևանգել և բռնաբարել է իր աղջկան:

Այդ օրը երեկոյան Կարենը իրենց տուն է բերել մատանին: Նրանք դարձյալ վիճել են, և Կարենը դարձյալ հայհոյանքներ է հնչեցրել իր և իր ընտանիքի հասցեին: Այդ ամենից վրդովված՝ 2018թ. նոյեմբերի 24-ին ինքը ներկայացել է ոստիկանության տարածքային ստորաբաժանում և հայտնել, որ նույն թվականի նոյեմբերի 22-ին Գեղարքունիքի մարզի Ջոլաքար գյուղի բնակիչ Կարեն Մելքոնյանը առևանգել և բռնաբարել է իր դստերը: Այդ փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ: Որպեսզի հասնի իր նպատակին, աղջկան՝ Մարիա Գևորգյանին պարտադրել է վարույթ իրականացնող մարմնին ներկայանալիս ցուցմունքով հաստատել իր հայտնած տեղեկությունները՝ հակառակ դեպքում սպառնացել ծեծել և դուրս նետել տանից: Վարույթ իրականացնող մարմնի համար դեպքն առավել իրական դարձնելու համար փայտե մահակով հարվածներ է հասցրել դստեր ազդրերի ներսի հատվածներին՝ առաջացնելով կապտուկներ և արյունազեղումներ:

Իմանալով այդ մասին՝ իրենց տուն է եկել Կարենը և առանց որևէ բան ասելու հարվածել է իրեն, ինչից նա ընկել է և գլուխը խփել հատակին, իսկ Կարենը ծնկել է իր վրա և երկու ձեռքով ուժեղ սեղմել կոկորդի հատվածում, ուզել խեղդել: Աղջիկը լացելով քաշել է Կարենի ձեռքերից, խնդրել հանգիստ թողնել մորը, սակայն Կարենը ավելի ուժեղ է սեղմել, ինչից իր ուշքը գնացել է ու չի հիշում, թե ինչ է կատարվել: Հետո իրեն ասել են, որ այդ պահին Մարիան խոհանոցային դանակով հարվածել է Կարենի թիկունքին, ինչից հետո Կարենը իրեն բաց է թողել:

Մեղադրյալ Մարիա Գևորգյանի ցուցմունքներն այն մասին, որ 2018 թվականիի նոյեմբերի 15-ին իրենց տուն են եկել ընկերը՝ Կարեն Մելքոնյանը, և վերջինիս մայր Սաթիկ Կիրակոսյանը՝ իր ձեռքը խնդրելու: Քանի որ Կարենը միայնակ տղա է եղել, ինքը համաձայնել է գնալ և համատեղ ապրել Կարենի հետ: Մի քանի օր համատեղ ապրելուց հետո հասկանալով, որ չի կարողանում այդպես շարունակել, ինքը զանգել է մորը՝ Կարինե Հասրաթյանին, և խնդրել գալ ու իրեն տուն տանել: Մայրը եկել է, հավաքել իր «վեշերը», և նրանք միասին վերադարձել են Բյուրեղավան՝ իրենց տուն: Նոյեմբերի 23-ին իրենց տուն է եկել Կարենը և վերադարձրել իրենց կողմից Կարենի մորը՝ Սաթիկին նվիրված անդամանդե քարով մատանին: Դրանից հետո Կարենը մոր հասցեին հնչեցրել է սեռական բնույթի հայհոյանքներ ու հեռացել: Այդ ամենից զայրացած իր մայրը՝ Կարինեն, ներկայացել է ոստիկանություն և հայտնել, թե իբր կարենը իրեն առևանգել է և բռնաբարել: Համոզված լինելով, որ վարույթ իրականանցնող մարմինը իրեն կանչելու է և հարցուփորձ է անելու դեպքի կապակցությամբ, մայրն իրեն հորդորել է հաստատել այն տեղեկությունները, ինչ ինքն է հայտնել հաղորդման մեջ: Չնայած սկզբում ինքն ընդդիմացել է, սակայն, երբ մայրը սպառնացել է ծեծել և դուրս վռնդել իրեն տանից, նախորդ գործի շրջանակներում որպես տուժող ներկայացել է ծանուցագրով իրեն կանչած վարույթ իրականացնող մարմին և ցուցմունքով հաստատել մոր հայտնածը: Մինչև ներկայանալը, իր ասածներն առավել համոզիչ դարձնելու համար, մայրը փայտե մահակով հարվներ է հասցրել իր ազդրերի ներսի հատվածներին՝ առաջացնելով սալջարդ և արյունազեղումներ: Մոր այդ գործողություններին ինքը չի ընդդիմացել, քանի որ շատ վախեցած է եղել:

Կարենը, տեղեկանալով, որ նա և նրա մայրը մեղադրել են իրեն հանցագործության մեջ, գնացել է նրանց տուն և բռունցքով հարվածել մոր՝ Կարինեի դեմքին, գցել նրան գետնին, այնուհետև ծնկել նրա վրա, ձեռքերով բռնել նրա վզից ու փորձել խեղդել: Ինքը խնդրել, աղաչել է Կարենին մորը հանգիստ թողնել, սակայն Կարենն ավելի ու ավելի ուժեղ է սեղմել մոր կոկորդը: Ինքը, քաշքշելով Կարենի ձեռքից և տեսնելով, որ չի կարողանում ազատել մորը, միաժամանակ նկատելով, որ մայրն արդեն կորցրել է գիտակցությունը, սեղանից վերցրել է խոհանոցային դանակը և հարվածել Կարենի թիկունքին: Դրանից հետո Կարենը բաց է թողել մորը և հեռացել իրենց տնից:

Այս քրեական գործով տվել է ճշմարտացի ցուցմունքներ, զղջացել է կատարածի համար:

Տվյալ գործի մեղադրանքի հետ առնչվող՝ մեկ այլ քրեական գործով **մեղադրյալ Կարեն Մելքոնյանի ցուցմունքներն** այն մասին, որ 2018 թվականի նոյեմբերի 15-ին մոր՝ Սաթիկ Կիրակոսյանի հետ գնացել է իր ընկերուհի Մարիա Գևորգյանի տուն՝ նրա ձեռքը խնդրելու: Մի փոքր խնջույք են կազմակերպել Մարիայենց տանը, որից հետո Մարիայի հետ գնացել են իրենց տուն: Խնջույքի ընթացքում նրա մայրը՝ Կարինե Հասրաթյանը, իր մորը նվիրել է ադամանդե քարով մատանի: Մի քանի օր անց իրենց տուն է եկել Կ. Հասրաթյանը, հավաքել Մարիայի իրերը, և նրանք միասին վերադարձել են Բյուրեղավան՝ իրենց տուն: Հաջորդ օրը ինքը զանգահարել է Կ. Հասրաթյանին՝ կատարածի համար պարզաբանում պահանջելու, սակայն վերջինս կոպիտ է պատասխանել իրեն, և նրանք վիճել են: Կ. Հասրաթյանը պահանջել է իրենից, որ հետ վերադարձնի նրա կողմից իր մորը նվիրված անդամանդե քարով մատանին, իսկ ինքը պատասխանել է, որ մայրը այն կրում է և չի պատրաստվում վերադարձնել: Այդ պատասխանից Կարինեն ավելի է զայրացել և պահանջել է, որ նա ամեն գնով մատանին վերադարձնի, թեկուզ սպասի հարմար առիթի և, առանց մոր գիտության, վերցնի այդ մատանին ու վերադարձնի իրեն՝ հակառակ դեպքում սպառնալով ոստիկանությունում հաղորդում ներկայացնել, թե իբր նա առևանգել և բռնաբարել է իր աղջկան: Իսկ ինքը ճարահատյալ սպասել է, որ մայրը քնի, ինչից հետո վերցրել է պահարանի վրա մոր կողմից թողնված ու վերջինիս պատկանող մատանին և գնացել Մարիայենց տուն: Մատանին տվել է Կարինեին: Նա իրեն մեղադրել է աղջկան դժբախտացնելու մեջ, որի շուրջ դարձյալ վիճել են:

Մի քանի օր հետո ինքը տեղեկացել է, որ Կարինեն դիմել է Ոստիկանություն և իրեն մեղադրել Մարիային առևանգելու և բռնաբարելու մեջ: Այդ ամենից խիստ զայրացած գնացել է Մարիայենց տուն, որտեղ դարձյալ իր և կարինեյի միջև խիստ վիճաբանություն է եղել, որի ընթացքում Կարինեն այնպես է զայրացրել իրեն, որ ինքը հարվածել է Կարինեի դեմքին, և հետո ցանկացել խեղդել նրան, սակայն Մարիան խոհանոցային դանակով հարվածել է իր թիկունքին, ինչից ուժեղ ցավ է զգացել և բաց թողել Կարինեին:

Տուժող Սաթիկ Կիրակոսյանի ցուցմունքն այն մասին, որ որդուն՝ Կարեն Մելքոնյանին, 2018 թվականի նոյեմբերի 15-ին ամուսնացրել է Մարիա Գևորգյանի հետ: Մարիայի մորից՝ Կարինե Հասրաթյանից, նվեր է ստացել ադամանդե քարով մատանի, որը կրել է: Նույն թվականի նոյեմբերի 22-ի երեկոյան հանել է մատանին և դրել հյուրասենյակի պահարանի վրա ու գնացել քնելու: Հաջորդ օրը նկատել է, որ մատանին տեղում չէ, ցանկացել է դիմել ոստիկանություն, բայց մտածել է՝ կարող է լավ չի հիշում և հնարավոր է՝ տանը կորցրած լինի:

Մեղադրյալներ Կ. Հասրաթյանի և Մ. Գևորգյանի, Կ. Հասրաթյանի և Կ. Մելքոնյանի, ինչպես նաև Մ. Գևորգյանի և Կ. Մելքոնյանի առերես հարցաքննության արձանագրությունները, որոնցով մեղադրյալները հաստատել են նախաքննական մարմնին իրենց տված ցուցմունքները:

Դատաբժշկական փորձագետի թիվ 1213/h եզրակացությունը, որի համաձայն՝ Կարեն Մելքոնյանի մարմնական վնասվածքը՝ ձախ թոքի վնասումով, պլևրալ խոռոչը թափանցող ծակած-կտրած վերքի ձևով, հետևանք է սուր ծակող-կտրող գործիքի ազդեցության, հնարավոր է նշված ժամկետում և հանգամանքներում, որը պատճառել է առողջությանը ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող:

Դատաբժշկական փորձագետի թիվ 1214/h եզրակացությունը, որի համաձայն՝ Մարիա Գևորգյանի կուսաթաղանթի անատոմիական ամբողջականությունը հին խախտված է, որի վաղեմությունը որոշել հնարավոր չէ դեպքի վաղեմության պատճառով: Մ. Գևորգյանի հետանցքի շրջանում վնասվածքներ կամ նրանց ապաքինումից գոյացած հետքեր չեն հայտնաբերվել: Մ. Գևորգյանի դատաբժշկական փորձաքննության ընթացքում հայտնաբերված մարմնական վնասվածքները՝ ազդրերի ներսի շրջանի արյունազեղումների և սալջարդի ձևով, պատճառվել են բութ առարկայով, հնարավոր է նշված ժամկետում և հանգամանքներում, որոնք, ինչպես առանձին-առանձին, այնպես էլ համակցության մեջ, պարունակում են առողջության թեթև վնասի հատկանիշներ:

Դատաբժշկական փորձագետի թիվ 1215/h եզրակացությունը, որի համաձայն՝ Կարինե Հասրաթյանի մարմնական վնասվածքները՝ գլխի ձախից քունքային շրջանի, գլխի գագաթային հատվածի սալջարդ վերքերի, պարանոցի շրջանների արյունազեղումների և սալջարդների, պարանոցի շրջանների քերծվածքների ձևով, հե-

տևանք են բութ առարկայի ներգործության, հնարավոր է նշված ժամկետում և հանգամանքներում, որը պատճառել է առողջությանը թեթև վնաս:

Նախաքննության մարմնի որոշմամբ «փայտե մահակը» ճանաչվել է **իրեղեն ապացույց**:

Դատաապրանքագիտական փորձաքննության թիվ 32/06-17 եզրակացությունը, համաձայն որի՝ փորձաքննությանը ներկայացված ադամանդե քարով մատանու արժեքը կազմում է 110.000 ՀՀ դրամ, ինչը նախաքննական մարմնի որոշմամբ ճանաչվել է **իրեղեն ապացույց**:

ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ

Դատարանում ամբաստանյալներ Կ. Հասրաթյանը և Մ. Գևորգյանը, ինչպես և տուժող Սաթիկ Կիրակոսյանը **պնդել են իրենց նախաքննական ցուցմունքները**:

Տվյալ գործի մեղադրանքի հետ առնչվող՝ մեկ այլ քրեական գործով մեղադրյալ Կարեն Մելքոնյանը նույնպես **պնդել է իր նախաքննական ցուցմունքը**:

Դատարանում հետազոտվել են նաև մեղադրյալներ Կ. Հասրաթյանի և Մ. Գևորգյանի, Կ. Հասրաթյանի և Կ. Մելքոնյանի, ինչպես նաև Մ. Գևորգյանի և Կ. Մելքոնյանի **առերես հարցաքննության արձանագրությունները**, դատաբժշկական փորձագետի թիվ 1213/h, 1214/h, 1215/h **եզրակացությունները**, դատաապրանքագիտական փորձաքննության թիվ 32/06-17 **եզրակացությունը** և **իրեղեն ապացույցները:**

ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

Հարցադրում 1.

Ինչպե՞ս պետք է որակվի Կարինե Հասրաթյանի արարքը (արարքները): Հիմնավորե՛ք պատասխանը:

Հարցադրում 2.

Ինչպե՞ս պետք է որակվի Մարիա Գևորգյանի արարքը (արարքները): Հիմնավորե՛ք պատասխանը:

Հարցադրում 3.

Համեմատե՛ք վերոշարադրյալ փաստական հանգամանքները թիվ ԿԴ3/0028/01/14 գործի (ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում) փաստական հանգամանքների հետ (տե՛ս Հավելված 1-ը): Նշե՛ք նմանությունները և տարբերությունները, ինչպես նաև գնահատե՛ք, թե դրանցից որոնք են գործի լուծման համար էականները:

Հարցադրում 4.

Մեկ առ մեկ անդրադարձե՛ք ամբաստանյալ Կարինե Հասրաթյանի անձը բնութագրող հատկանիշներին և գործի փաստական հանգմանքներին՝ նշելով, թե դրանցից որոնք կարող են գնահատվել որպես մեղմացնող կամ ծանրացնող հանգամանք: Հիմնավորե՛ք պատասխանը:

Հարցադրում 5.

Դատարանը Կ. Հասրաթյանի նկատմամբ ազատազրկման ձևով պատիժ նշանակելիս պատժի նշանակման ի՞նչ կանոններ պետք է կիրառի և ինչպե՞ս պետք է որոշի պատժի հաշվարկման սկիզբը: Հիմնավորե՛ք պատասխանը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀՀ Վճռաբեկ դատարանի ԿԴ3/0028/01/14 գործով կայացված որոշման փաստական հանգամանքներ

Ամբաստանյալ Գ.Ասատրյանին մեղադրանք է առաջադրվել և նախաքննությամբ հիմնավորված է համարվել, որ «(...) [Նա] 2013թ. ամռան ամիսներին, տանը շինարարական աշխատանքներ կատարելու համար, ցեմենտ է գնել տուժող՝ Անդրանիկ Ասատրյանից և պարտք մնացել 36.000 դրամ ու խոստացել է գումարը վճարել հոր՝ Հակոբ Ասատրյանի ՌԴ-ից արտագնա աշխատանքից վերադառնալուց հետո:

14.12.2013թ. Ա.Ասատրյանը տեղեկացել է, որ Գոռ Ասատրյանի հայրը 2013թ. դեկտեմբերի 7-ին վերադարձել է ՌԴ-ից և Գ.Ասատրյանը չի վերադարձնում պարտքը այդ կապակցությամբ զանգահարել է նրա բջջային հեռախոսին, սակայն վերջինս չի պատասխանել զանգերին, իսկ պատասխանելուց անհարկի ձգձգել է գումարի վերադարձը, որի պատճառով Ա.Ասատրյանը գնացել է Կոտայքի մարզի Նոր-Գեղի գյուղի Հրաչյա Քոչար փողոցի 3-րդ տան բակ և դուրս հրավիրել Գ.Ասատրյանին, ով տանից խոհանոցային դանակը ձեռքին դուրս է եկել Ա.Ասատրյանին ընդառաջ:

Այնուհետև, կենցաղային հարցերի շուրջ, գումարը վերադարձնելու հետ կապված, Ա.Ասատրյանի և Գ.Ասատրյանի միջև ծագել է վիճաբանություն, որի ընթացքում միմյանց հասցեին տվել են հայհոյանքներ և այն վերածվել է քաշքշուկի ու ծեծկռտուքի, որը տևել է շուրջ հինգ րոպե: Վիճաբանության ժամանակ, Ա.Ասատրյանը գետնին վայր է գցել Գ.Ասատրյանին, ծնկել նրա վրա և բռունցքներով հարվածներ հասցրել վերջինիս դեմքին, պատճառել ֆիզիկական ցավ, որի ժամանակ Գ.Ասատրյանը խոհանոցային դանակով դիտավորյալ հարվածել է Ա.Ասատրյանի կրծքավանդակի ձախ կեսի կողմնային մակերեսին և նրա առողջությանը պատճառել է կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս: Նրանց միջև ծագած ծեծկռտուքը տեսել է Գ.Ասատրյանի կինը՝ Արմինե Բալասանյանը, օգնության է կանչել ամուսնու ծնողներ՝ Հակոբ և Թամարա Ասատրյաններին, ովքեր հարևանուհի՝ Նինա Հարությունյանի հետ միասին մոտեցել և բաժանել են նրանց»:

Առաջին ատյանի դատարանը ապացուցված է համարել հետևյալը. «(...) Գոռ Ասատրյանը, 2013թ.-ի ամռանը, իր՝ Կոտայքի մարզի Նոր Գեղի գյուղի Հրաչյա Քոչարի փողոց, 3-րդ հասցեում գտնվող տանը, կատարել է շինարարական աշխատանքներ, որի ժամանակ, Անդրանիկ Ասատրյանից գնել է ցեմենտ, որի գումարի մի մասը տվել է Անդրանիկ Ասատրյանին, իսկ 36.000 դրամը՝ սեպտեմբեր ամսին մնացել է պարտք և փոխադարձ պայմանավորվածություն են ձեռք բերել այն մասին, որ Գոռ Ասատրյանը նշված գումարը Անդրանիկ Ասատրյանին կվերադարձնի հոր՝ Հակոբ Ասատրյանի, ՌԴ-ից արտագնա աշխատանքից վերադառնալուց հետո: (...) Անդրանիկ Ասատրյանը, 2014թ.-ի դեկտեմբերի 14-ին, տեղեկանալով, որ Գոռ Ասատրյանի հայրը վերադարձել է, իսկ Գոռ Ասատրյանը իրենց փոխադարձ պայմանավորվածության համաձայն՝ 36.000 դրամ պարտք գումարը չի վերադարձնում, (...) մի քանի անգամ բջջային հեռախոսով զանգահարել է Գոռ Ասատրյանին, սակայն վերջինս, հասկանալով, որ Անդրանիկ Ասատրյանը պարտք գումարը պետք է պահանջի, մինչդեռ նա այդ գումարը չի ունեցել և Անդրանիկ Ասատրյանի հեռախոսազանգերին չի պատասխանել: Անդրանիկ Ասատրյանը Գոռ Ասատրյանի վերը նշված վարքագծից զայրացած, նույն օրը (...) իր ավտոմեքենայով գնացել է Գոռ Ասատրյանի տան մոտ, ավտոմեքենայից իջել և մոտեցել է նրա տան դարպասներին և այնտեղից տեսել է պատուհանի մոտ կանգնած Գոռ Ասատրյանին ու բջջային հեռախոսով զանգահարել է նրան: Վերջինս նույնպես պատուհանից տեսել է իրենց տան դարպասների մոտ կանգնած Անդրանիկ Ասատրյանին, վերցրել է հեռախոսը և նրանք երկուսով, պարտքի շուրջ վիճաբանել են և վիրավորել միմյանց և Անդրանիկ Ասատրյանը Գոռ Ասատրյանին դուրս է կանչել: Մինչ Անդրանիկ Ասատրյանի հետ հեռախոսով խոսելը, Գոռ Ասատրյանը, գտնվելով իր տանը, իր երեխաների համար, խոհանոցային դանակով, խնձոր կտրելիս է եղել, և երբ Անդրանիկ Ասատրյանը հեռախոսով կապվել է և նրան դուրս կանչել, նա աջ ձեռքին ունենալով տան խոհանոցային դանակը, իսկ ձախ ձեռքին՝ խնձոր, դրանք, մեխանիկորեն, իր հետ վերցնելով, դուրս է եկել իրենց տան բակ և ընդառաջ գնացել Անդրանիկ Ասատրյանին:

Վերջինս, տեսնելով Գոռ Ասատրյանին, մտել է նրանց տան բակ և նրա ձեռքին տեսնելով դանակ, ավելի է զայրացել և հայհոյել Գոռ Ասատրյանին, ասելով, թե՝ պարտքը չի վերադարձնում և դանակով գալիս է իր վրա և նրանք երկուսով, փոխադարձ վիրավորանքներ են հասցրել միմյանց և քաշքշել իրար, որի ժամանակ, Անդրանիկ Ասատրյանը աջ ոտքով հարվածել է Գոռ Ասատրյանի աջ ձեռքին, որից դանակը ընկել է գետնին, ձյան մեջ, 1 մետր հեռավորության վրա: Դրանից հետո, Անդրանիկ Ասատրյանը, նույն ոտքով հարվածել է Գոռ Ասատրյանի ոտքերին, որից Գոռ Ասատրյանը մեջքի վրա վայր է ընկել գետնին, իսկ Անդրանիկ Ասատրյանը, որը ֆիզիկապես ավելի ուժեղ և հաղթանդամ է եղել, քան Գոռ Ասատրյանը, ինչպես նաև նրանից 7 տարի տարիքով մեծ է եղել, ծնկել է նրա վրա, ձախ ձեռքով բռնել է նրա օձիքից, իսկ աջ ձեռքով, բռունցքով սկսել է հարվածներ հասցնել Գոռ Ասատրյանի դեմքին:

Գոռ Ասատրյանը փորձել է դիմադրել, սակայն չի կարողացել, դիմել է Անդրանիկ Ասատրյանին, որպեսզի իրեն բաց թողնի և հարվածներ չհասցնի, սակայն Անդրանիկ Ասատրյանը գտնվելով զայրացած վիճակում, շարունակել է բռունցքով հարվածներ հասցնել Գոռի դեմքին: Նրանց աղմուկի ձայներից, նրանց է մոտեցել Գոռ Ասատրյանի կինը՝ Արմինե Բալասանյանը, այնուհետև՝ երեխաները, Արմինե Բալասանյանը նույնպես խնդրել է և պահանջել է Անդրանիկ Ասատրյանին՝ բաց թողնել Գոռ Ասատրյանին: Այդ ժամանակ, երեխաները սկսել են լաց լինել, սակայն Անդրանիկ Ասատրյանը շարունակել է հարվածել Գոռ Ասատրյանին, իսկ վերջինս, ֆիզիկապես ավելի թույլ լինելով, չի կարողացել ազատվել նրանից և նրա բռունցքների հարվածներից, շարունակելով մեջքի վրա պառկած մնալ գետնին, իսկ Անդրանիկ Ասատրյանը՝ ծնկած նրա վրա: Այդ ժամանակ, Գոռ Ասատրյանը իր աջ ձեռքը ազատել է, շոշափելով փորձել է գետնից ինչ-որ մի իր վերցնել, Անդրանիկ Ասատրյանին վնասելու և նրանից ազատվելու համար, գետնից, ձյան միջից, նրա ձեռքն է ընկել իր ձեռքին եղած, գետնին ընկած դանակը և զգուշացրել Անդրանիկ Ասատրյանին, որ իրեն բաց թողնի, այլապես՝ կծակի նրան, սակայն Անդրանիկ Ասատրյանը բաց չի թողել և շարունակել է Գոռի վրա ծնկի եկած վիճակում, ձախ ձեռքով նրա օձիքը բռնած, աջ ձեռքով՝ բռունցքով հարվածներ հասցնել, իսկ Գոռ Ասատրյանը, իրենց տան խոհանոցային դանակով, մեկ անգամ հարվածել է Անդրանիկ Ասատրյանի կրծքավանդակի ձախ կեսի կողմնային մակերեսին՝ վերջինիս պատճառելով ծանր մարմնական վնասվածք՝ որպես կյանքին վտանգ սպառնացող, սակայն, դրանից հետո, Անդրանիկ Ասատրյանը շարունակել է բռունցքով հարվածներ հասցնել Գոռ Ասատրյանի դեմքին: Այնուհետև, նրանց աղմուկից, տանից դուրս է եկել Գոռ Ասատրյանի մայրը (...) և հարևանուհին (...), ինչպես նաև (...) Գոռ Ասատրյանի հայրը (...) և նրանք երեքով բաժանել են Գոռ և Անդրանիկ Ասատրյաններին (...)»